ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ 35 ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ԿՏՐԱՄԱԴՐՎԻ «ՓԱՍՏԱԲԱՆ ԵԶԵԳԵԼՅԱՆ» ԹՈՇԱԿ

18.01.2016 12:56



Հարգելի փաստաբաններ,

Ֆրանսիայի Հանրապետության քաղաքացի, ՀՀ փաստաբանների պալատի պատվավոր անդամ, բարերար Ռայմոն Եզեգելյանի և Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի միջև համագործակցության շրջանակներում՝ **Ռայմոն Եզեգելյանը պատրաստակամություն է հայտնել կանխավճարի կարգով վճարել ՀՀ փաստաբանների պալատի նախագահի կողմից սահմանած կարգով որոշված Երևան քաղաքի 35 (երեսունհինգ) փաստաբանների մեկ տարվա անդամավճարները:**

Նշված նախաձեռնության հետ կապված ՀՀ փաստաբանների պալատի նախագահի **18.01.2016թ. թիվ 08-Լ որոշմամբ** հաստատվել է «**Երևան քաղաքի 35 փաստաբանների «Փաստաբան Եզեգելյան» թոշակ տրամադրելու մասին» կարգը**, համաձայն որի՝ շահառուներին որոշելու նպատակով ձևավորված հանձնաժողովը՝ ըստ կարգով նշված առաջնահերթության, նախապատվություն է տալու Երևան քաղաքի հետևյալ փաստաբաններին՝

1) 60-69 տարեկան փաստաբաններին՝ ***ոչ ավել, քան 10 (տասը) փաստաբան*** *(այս խմբում նախապատվությունը տրվում է առավել տարիքով փաստաբաններին).*

2) 2-րդ կամ 3-րդ կարգի հաշմանդամ փաստաբաններին՝ ***ոչ ավել, քան 5 (հինգ) փաստաբան*** *(այս խմբում նախապատվությունը տրվում է առավել վաղ հաշմանդամության կարգ ստացած փաստաբաններին).*

3) Երկու կամ ավելի անչափահաս երեխաներ ունեցող փաստաբաններին՝ ***ոչ ավել, քան 10 (տասը) փաստաբան*** *(այս խմբում նախապատվությունը տրվում է առավել շատ երեխա ունեցող, իսկ երեխաների հավասար քանակի դեպքում՝ առավել փոքր տարիքի երեխա ունեցող փաստաբաններին).*

4) Մեկ ընտանիքի անդամ հանդիսացող փաստաբաններին՝ ***ոչ ավել, քան 10 (տասը) փաստաբան*** *(մեկ ընտանիքի անդամ հանդիսացող փաստաբան է համարվում այն փաստաբանը, ում՝ ամուսինը (կինը), հայրը, մայրը, քույրը, եղբայրը, որդին կամ դուստրը նույնպես հանդիսանում է փաստաբան և տվել է իր համաձայնությունը ընտանիքի մյուս անդամին Շահառու գրանցելու համար (ընտանիքի անդամներից կարող է գրանցվել միայն մեկը). այս խմբում նախապատվությունը տրվում է ընտանիքի առավել մեծ տարիքով անդամներին)։*

Կարգին համապատասխան որոշված ընդհանուրը 35 շահառուներին կտրվեն համապատասխան հավաստագրեր։

Առաջարկվող նորություններ

27.04.2015ՌԱՅՄՈՆ ԵԶԵԳԵԼՅԱՆԻ ԵՎ

29.04.2015ՀՀ ՄԱՐԶԵՐՈՒՄ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

10.07.2015ՄԱՐԶԵՐԻ 80 ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐ ՍՏԱՑԵԼ ԵՆ

ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ՄԻՋԵՎ ԿՆՔՎԵԼ Է ՀՈՒՇԱԳԻՐ

ԾԱՎԱԼՈՂ 80 ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻՆ ՇՆՈՐՀՎԵԼՈՒ Է ՄԵԿ ՏԱՐՎԱ ԱՆԴԱՄԱՎՃԱՐԻ ԿԱՆԽԱՎՃԱՐԻ ՀԱՎԱՍՏԱԳՐԵՐ

ՌԱՅՄՈՆ ԵՋԵԳԵԼՅԱՆԻ ԹՈՇԱԿԻ ՀԱՎԱՍՏԱԳՐԵՐԸ

14.12.2015ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔՈՒՄ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ 80 ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻՆ ՇՆՈՐՀՎԵԼՈՒ ԵՆ ՄԵԿ ՏԱՐՎԱ ԱՆԴԱՄԱՎՃԱՐԻ ԿԱՆԽԱՎՃԱՐԻ ՀԱՎԱՍՏԱԳՐԵՐ

Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })